



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՌԻՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2023

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական
համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

12 (16)

ԵՐԵՎԱՆ 2023

ЕРЕВАН 2023

YEREVAN 2023

*Երաշխավորվել է սույազրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի
անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից*

*Печатается по решению Ученого совета филиала Московского государственного
университета им. М.В. Ломоносова в г. Ереване*

*Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State Univer-
sity M.V. Lomonosov in Yerevan*

«ՈՌԻՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հան-
դեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի
մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրու-
թյուն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնա-
կանների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսա-
յականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորու-
թյան ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:


Назначение научно-методического журнала **«ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ
РУСИСТИКИ»** рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как
отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения
внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым
популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов,
грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №12
(16). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2023. – 266 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***



 ORCID: 0000-0002-4377-1601

 ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ГОСТЕВАЯ СТРАНИЦА

СОВРЕМЕННЫЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ПРЕДОТВРАЩЕНИЮ ДЕСТРУКТИВНОГО ВОЗДЕЙСТВИЯ ДЕЗИНФОРМАЦИИ НА СТУДЕНТОВ

Армен Самвелович Аветисян

avetlsyan.armen@inbox.ru

*Аспирант кафедры прикладной психологии,
Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

В статье рассмотрен современный социально-психологический подход к профилактике социально-психологического деструктивного воздействия дезинформации на студентов. В статье представлены последствия негативного воздействия Интернета на «интернет-зависимость» и явления «социально-психологического деструктивного воздействия дезинформации», непосредственно связанные друг с другом.

Ключевые слова: социально-психологические, цифровые технологии, дезинформация, интернет, студент, подходы, негативные последствия, зависимость, деструктивное воздействие, социализация.

Ժամանակակից աշխարհի հարափոփոխ բնույթը մեծապես պայմանավորված է թվային տեխնոլոգիաների զարգացման տեմպով և ոլորտներով: Բնականաբար, հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների փոխակերպումը այսօր հետևանք է նաև թվային տեխնոլոգիաների՝ մասնավորապես համացանցի ազդեցության իր դրական և

բացասական հետևանքներով: Տարբերում են թվային տեխնոլոգիաներ օգտագործողների երեք տեսակ՝

- թվային ինսայդերներ, որոնք մշտապես օգտվում են թվային տեխնոլոգիաներից,
- թվային նորեկներ, որոնք նոր են սկսում ծանոթանալ թվային տեխնոլոգիաներին,
- նրանք, որոնք չեն օգտվում թվային տեխնոլոգիաներից (թվային աութսայդերներ) [7: 65–77]:

Թվային տեխնոլոգիաներն իրենց ազդեցություն են թողնում ողջ հասարակության՝ բոլոր սոցիալական և տարիքային խմբերի վրա: Բացառություն չեն այդ շարքում ուսանող երիտասարդները: Համացանցն ուսանող երիտասարդների վրա ունենում է ուղղակի և անուղղակի ազդեցություն:

Տ. Բրաբազոնի կարծիքով «թվային տեխնոլոգիաների օգնությամբ անձը կարողանում է ձեռք բերել ինքնաբավարարման միջոցներ, և սոցիալական կապիտալ, ինչը թվային աութսայդերները չեն կարող հասկանալ, և որի պատճառով դառնում են մեկուսացած և անհավասար» [1]:

Թվային տեխնոլոգիաների և հասարակության փոխհարաբերությունների ամբողջական մոդելը մշակել է Մ. Քաստելսը, ըստ որի «Էլեկտրոնային հաղորդակցությունների և տեղեկատվական համակարգերի զարգացումը խթանում է տարածության հաղթահարումն ու առօրյա կենսակերպում գործառնման դյուրին դառնալը: Ցանցային հասարակության զարգացումը իրականացվել է տեխնոլոգիայի միջոցով, և այժմ թվային տեխնոլոգիաների կիրառման հետ կապված փոխհարաբերությունների ամբողջական մոդելը ցույց է տալիս, որ անհատը անմիջականորեն կախված է տեխնոլոգիաներից: Մարդկանց մի մասն ինքն է ընտրել թվային տեխնոլոգիաներից կախվածությունը, իսկ մյուսները պարզապես պարտադրված են օգտվելու այն ծառայություններից, որոնք առաջարկում են թվային տեխնոլոգիաները» [2]:

Անառարկելի է, որ համացանցի բացասական ազդեցության հետևանք են «համացանցային կախվածության» և «ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության» երևույթները, որոնք անմիջականորեն կապված են միմյանց: Այսօր բազմաթիվ հետազոտություններ են իրականացվում սովորողների համացանցային կախվածության և նրանց վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության ուսումնասիրման նպատակով [4, 5, 11]: Այս տեսանկյունից ռիսկային են հատկապես դեռահասները, պատանիները և երիտասարդները:

Ապատեղեկատվությունն, ինչպես նշեցինք, ուսանողների վրա ունենում է սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ և՛ ուղղակի, և՛ անուղղակի ազդեցություն.

- ֆիզիկական և հոգեկան առողջության վրա. առաջ են գալիս մի շարք խնդիրներ կապված իմունային համակարգի թուլացման, հենաշարժողական ապարատի գործունեության, տեսողական, տազնապային վարքագծի ձևավորման, դեպրեսիայի, ընդհանուր հոգեկան ընկճվածության,
- պատճառ է դառնում սոցիալական հարաբերությունների խաթարման, ընտանիքի անդամներից, ընկերներից մեկուսացման, օտարման,
- բացասականորեն է ազդում ուսումնառության որակի, իմացական գործընթացների զարգացման վրա:

Այս ամենի արդյունքում կարող ենք եզրակացնել, որ ապատեղեկատվությունն, ընդհանուր առմամբ, բացասաբար է անդրադառնում ուսանողի սոցիալականացման գործընթացի վրա:

Ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ (կործանարար) ազդեցությունը գիտնականների կողմից բնութագրվում է նաև որպես հոգեկան առողջության հիմնախնդիր և առաջարկվում է հոգե-

բանամանկավարժական, աջակցության, հոգեբուժական, ինչպես նաև թերապևտիկ լուծումներ:

Անառարկելի է, որ ապատեղեկատվությունը համարվում է տեղեկատվական և հոգեբանական ազդեցության ձևերից մեկը և այսօր սերտորեն կապված է մարդկությանը բնորոշ համընդհանուր այնպիսի բացասական երևույթների հետ, ինչպիսիք են անձի սոցիալականացման գործընթացի խաթարումը, հոգեկան անկայունությունը, վարքային տարբեր կործանարար դրսևորումները: Այսպես, օրինակ, համացանցային կախվածության հիմնախնդրի խոշորագույն տեսաբաններից մեկը՝ Ք.Յանգը համարում է, որ «Համացանցային կախվածության աստիճանը որոշվում է ոչ թե համացանցում անցկացրած ժամանակով, այլ իրական կյանքում ունեցած կորուստներով» [9]:

Անձի վերաբերմունքը զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերում ապատեղեկատվության նկատմամբ սերտորեն կապված է հուզապահանջմունքային ոլորտի առանձնահատկությունների հետ, որոնցից են՝ համացանցային կոլեկտիվ մտածողությունը, համացանցային համայնքի ըմբռնումը, ապատեղեկատվության սպառնալիքային էֆեկտին ենթարկվելը, սեփական և այլ խմբերի ներկայացուցիչների համատեղ գործունեությունը՝ ապատեղեկատվության օգտագործելու առումով և այլն:

Ապատեղեկատվության նկատմամբ անձի վերաբերմունքի կառուցվածքում Ե.Ա. Միխենը և Տ.Ա. Նեստիկը առանձնացնում են հետևյալ բաղադրիչները. ճանաչողական, զգացմունքային-գնահատողական, արժեքափմաստային և վարքային:

Ճանաչողական բաղադրիչը ներառում է [12: 8].

- ՁԼՄ-ներում և սոցիալական ցանցերում ապատեղեկատվության օգտագործման հաճախականության գնահատումը,
- պատկերացումներն ապատեղեկատվության աղբյուրների մասին,

- պատկերացումներն ապատեղեկատվության նպատակների մասին,
- պատկերացումներն ապատեղեկատվության իրականացման միջոցների մասին,
- պատկերացումներն այլ ռիսկերի հետ կապերի մասին,
- պատկերացումներն ապատեղեկատվությունից պաշտպանվելու (դիմադրության) մասին,
- պատկերացումները պետության, կազմակերպությունների մակարդակով հակազդելու ուղիների մասին,
- պատկերացումներն ապատեղեկատվության օգտագործման սպասված և փաստացի հետևանքների մասին,
- պատկերացումները նրանց մասին, որոնք կարող են օգտագործել ապատեղեկատվությունը իրենց նպատակների համար:

Զգացմունքային-գնահատողական բաղադրիչը ներառում է.

- ապատեղեկատվության սպառնալիքի նշանակությունը այլ տեսակի սպառնալիքների համեմատ,
- ՋԼՄ-ներում ստի կիրառման գնահատումը,
- ապատեղեկատվության աղբյուրների գնահատումը:

Արժեքափմաստային բաղադրիչը ներառում է.

- ապատեղեկատվության օգտագործման թույլատրելիությունը,
- արժեքները, որոնք հակասում են ապատեղեկատվության օգտագործմանը և այն արժեքները, որոնք արդարացնում են ապատեղեկատվության օգտագործումը:

Վարքային բաղադրիչը ներառում է.

- ապատեղեկատվությանը արձագանքելու նախընտրելի եղանակները,
- անհատական գործողությունների պատրաստակամությունը աջակցելու հասարակական և պետական նախաձեռնություն-

ներին, որոնք ուղղված են ապատեղեկատվության դեմ պայքարին,

- ապատեղեկատվությանը արձագանքման արագությունը,
- այլ մարդկանց հետ ապատեղեկատվությունը քննարկելու պատրաստակամությունը (ներառյալ այդ մարդկանց շրջանակը և նրանց «շառավիղը»:

Տարբեր գիտական շրջանակներում այսօր մշակվում են ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման ռազմավարություններ, որոնք երբեմն դրսևորվում են իրարամերժ հանգուցալուծումներով: Մեր կարծիքով, այդ իրարամերժության մեջ առաջնային պլան է մղվում ուսանող երիտասարդի սոցիալականացման հաջողությունն ապահովող, հնարավոր վտանգներն ու ձախողումները կանխարգելող ռազմավարությունների կիրառումը, հասարակության մեջ արդյունավետ հարմարվելու, ինքնիրացվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Ժամանակակից կրթական հաստատություններում գործող բազմամասնագիտական թիմը՝ հոգեբան, հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, որպես գործառնության պարտականություններ իրականացնում են նաև սոցիալ-հոգեբանական, մանկավարժական կանխարգելիչ աշխատանքներ: Հենվելով այն դիտարկման վրա, որ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման մոտեցումները ընդգրկում են հոգեբանամանկավարժական, վարքաբանական և ճանաչողական ռազմավարությունների համակցությունը՝ հանգել ենք եզրակացության, որ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելումը պետք է իրականացնել զուգահեռաբար և՛ հասարակական, և՛ խմբային, և՛ անհատական մակարդակներում: Այդ աշխատանքներում կիրառվում են սոցիալ-հոգեբանական տեխնիկաներ, օգտագործվում է կրթական ծրագրերի ներուժը,

մասնավորապես՝ մեդիակրթության, անձնային աճի, իմացական որակների զարգացման մեթոդիկաներ, որոշ դեպքերում նաև հոգեկրթական տարբեր ծրագրեր:

Ապատեղեկատվությունը սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցություն է ունենում ուսանողների արժեքային կողմնորոշումների, սոցիալական վարքագծի, հոգեկան հավասարակշռության, սոցիալական կապիտալի և սոցիալական ինքնության ձևավորման վրա:

Ժամանակակից արտասահմանյան հոգեբանության մեջ ապատեղեկատվության խնդիրը ուսումնասիրվում է մի քանի ուղղություններով: Առաջին ուղղությունը վերաբերում է անհատական հատկանիշներին, որոնք մարդուն դարձնում են ավելի ենթակա ապատեղեկատվությանը:

Երկրորդ ուղղությունը վերաբերում է ապատեղեկատվության կեղծ հիշողությունների ազդեցությանը:

Երրորդ ուղղությունը վերաբերում է ապատեղեկատվության հետ կապված ճանաչողական գործընթացների նյարդակենսաբանական ուսումնասիրություններին:

Չորրորդ ուղղությունը նվիրված է ապատեղեկատվության հանդեպ անձի զգայունությունը նվազեցնելու տարբեր եղանակներին [13]:

Ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության աղբյուրներ են ՋԼՄ-ները: Վերջիններս, օգտագործելով համացանցի, մասնավորապես՝ սոցիալական ցանցերի օգտատերերի խմբային բնեռացման մոդելները, ստեղծելով գերակշռող խմբային կարծիք, զգացմունքային վարակիչ ազդեցություն են գործում մասնավորապես դեռահասների և երիտասարդության հոգեկան ոլորտի վրա:

Հետազոտությունները ցույց են տվել, որ օգտատերերը ավելի հակված են Facebook սոցիալական ցանցի տեղեկատվության ընկալմանը, որը մեծամասամբ կրում է ապատեղեկատվական և որոշ առումով էլ գիտական բնույթ [4]: Մ.Կ. Ջոնսոնը և համահեղինակները նշում են, որ ապատեղեկատվության ազդեցության մակարդակը անձի վրա կարող է

երկարատև ժամանակի հեռանկարներ ունենա, քանի որ մոռացված կամ հնացած տեղեկատվությունը մնում է հիշողության մեջ [6], իսկ Էսկեր Ու.Կ.Ն.-ի և այլոց կածիքով, եթե մոռացված կամ հնացած տեղեկատվությունը հայտնվում է հիշողության մեջ, ապա այն ընկալվում է որպես վստահելի և կասկած չի առաջացնում [8]:

Մ.Բ. Դոլգովը գտնում է, որ ապատեղեկատվության ազդեցությունը պետք է համարել անձի սուբյեկտային հուզական տրամադրվածությունը, կարծիքը այս կամ այն խնդիրների վերաբերյալ, այս կամ այն իրավիճակի իմաստավորումը նրա կողմից և վերջապես աշխարհի պատկերի անհատական ընկալումը [10]:

Ելնելով վերը քննարկված մոտեցումներից՝ կարելի է փաստել, որ այսօր ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դերակտիվ ազդեցության հիմնական աղբյուրը համացանցն է, որից կախվածությունը ահռելի չափերի է հասել և դրա կանխարգելումը պահանջում է համարժեք համակարգային և համալիր ներգործություն: Այս տեսանկյունից հետաքրքրական է Ռ. Դևիսի համացանցային կախվածության էթիոլոգիայի մոդելը՝ հիմնված ճանաչողական-վարքաբանական մոտեցման վրա: Նա գտնում է, որ համացանցային կախվածության հեռահար/սկզբնական պատճառը ամկա հոգեպաթոլոգիան է, օրինակ, դեպրեսիան, սոցիալական տազնապը, նյութից կախվածությունը, իսկ սթրեսածինը՝ համացանցն է [3]:

Ամփոփելով, հանգում ենք եզրակացության, որ.

1. Թվային տեխնոլոգիաներն իրենց ազդեցությունն են թողնում ողջ հասարակության՝ բոլոր սոցիալական և տարիքային խմբերի վրա: Բացառություն չեն այդ շարքում ուսանող երիտասարդները:

2. Համացանց, մասնավորապես դրանով տարածվող ապատեղեկատվությունն ուսանող երիտասարդների վրա ունենում է սոցիալ-հոգեբանական դերակտիվ և՛ ուղղակի, և՛ անուղղակի ազդեցություն:

3. Անձի վերաբերմունքը զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերում ապատեղեկատվության նկատմամբ սերտորեն կապված է հուզապահանջմունքային ոլորտի առանձնահատկությունների հետ:

Ուսանող երիտասարդների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելումը պետք է իրականացնել զուգահեռաբար և՛ հասարակական, և՛ խմբային, և՛ անհատական մակարդակներում: Այդ աշխատանքներում կիրառվում են սոցիալ-հոգեբանական տեխնիկաներ, օգտագործվում է կրթական ծրագրերի ներուժը, մասնավորապես՝ մեդիակրթության, անձնային աճի, իմացական որակերի զարգացման մեթոդիկաներ, որոշ դեպքերում նաև հոգեկրթական տարբեր ծրագրեր:

ЛИТЕРАТУРА

1. *Brabazon T.W.* Wiring Cod`s Waiting Rooms: The Graying of the World Wide Web // *The Revolution Will Not Be Downloaded.* – Oxford, Chandos, 2008. – PP. 21–71. DOI: [10.1016/B978-1-84334-459-9.50003-7](https://doi.org/10.1016/B978-1-84334-459-9.50003-7).
2. *Castells M.* *The Rise of the Network Society.* – Massachusettes: Blackwell Publishers, 1996. – 556 p.
3. *Davis R.A.* A cognitive behsvioral model of pathological internet use // *Computers in Himan Behavior*, Vol. 17, Issue 2, 2001. – PP. 187–195. DOI: [10.1016/S0747-5632\(00\)00041-8](https://doi.org/10.1016/S0747-5632(00)00041-8).
4. *Del Vicario M., Bessi A., Zollo F., Petroni F., Scala A., Caldarelli G., Stanley H.E. & Quattrocioni W.* The spreading of misinformation online // *Proceedings of the National Academy of Sciences*, Vol. 113, Issue 3, 2016. – PP. 554–559. DOI: [10.1073/pnas.1517441113](https://doi.org/10.1073/pnas.1517441113).
5. *Ecker U.K.H., Lewandowsky S., Chang E.P., & Pillai R.* The effects of subtle misinformation in news headlines. *Journal of Experimental Psychology: Applied*, Vol. 20, Issue 4, 2014. – PP. 323–335. DOI: [10.1037/xap0000028](https://doi.org/10.1037/xap0000028)
6. *Johnson M.K., Kounios J., Reeder J.A.* Time-course studies of reality monitoring and recognition // *Journal of Experimental Psychology: Learning, Memory,*

- and Cognition, Vol. 20, Issue 6, 1994. – PP. 1409–1419. DOI: [10.1037//0278-7393.20.6.1409](https://doi.org/10.1037//0278-7393.20.6.1409).
7. *Johnson N.F.* The Multiplicities of Internet Addiction: The Misrecognition of Leisure and Learning. England, 2008. – 156 p.
 8. *Weedon J., Nuland W., Stamos A.* Information Operations and Facebook. Version 1.0 edition, 2017. – 13 p. [Electronic resource]. – Mode of access: <https://ru.scribd.com/document/346741164/Facebook-and-Information-Operations-v1> (Date of access: December 9, 2023).
 9. *Young K.S.* Facebook Addiction Disorder? The Center for Online Addiction: Bradford, PA, USA, 2009 [Electronic resource]. – Mode of access: http://www.netaddiction.com/index.php?option=com_blog&view=comments&pid=5&Itemid=0 (Date of access: December 9, 2023).
 10. *Долгов М.И.* Классификация информационно-психологических воздействий и оценка степени их угроз для общественного сознания // Общество: политика, экономика, право. – Краснодар: ХОРС, 2016. – СС. 47–52.
 11. *Лазарева И.Ю.* Профилактика деструктивного информационно-психологического воздействия на молодежь в сети Интернет // Психопедагогика в правоохранительных органах, 2021. – Т. 26. – № 4(87). – СС. 416–422.
 12. *Мухеев Е.А., Нестик Т.А.* Дезинформация в социальных сетях: состояние и перспективы психологических исследований // Социальная психология и общество, 2018. – Т. 9. – № 2. – М., 2018. – СС. 5–20.
 13. *Сидоренков А.В., Мондрус А.Л.* Эмпирическое обоснование модели групповой сплоченности // Психологический журнал, 2012. – Т. 33. – № 2. – М., 2012. – СС. 45–58.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎՐԱ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ա.Ս. Ավետիսյան

avet1syan.armen@inbox.ru

*Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի
Կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկված է ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման ժամանակակից սոցիալ-հոգեբանական մոտեցումները: Հոդվածում համացանցի բացասական ազդեցության հետևանք են ներկայացվում «համացանցային կախվածության» և «ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության» երևույթները, որոնք անմիջականորեն կապված են միմյանց:

Բանալի բառեր՝ սոցիալ-հոգեբանական, թվային տեխնոլոգիաներ, ապատեղեկատվություն, համացանց, ուսանող, մոտեցումներ, բացասական հետևանք, կախվածություն, դեստրուկտիվ ազդեցության, սոցիալականացում:

MODERN SOCIO-PSYCHOLOGICAL APPROACHES TO PREVENTING THE DESTRUCTIVE IMPACT OF DISINFORMATION ON STUDENTS

A. Avetisyan

avet1syan.armen@inbox.ru

*Postgraduate student at the Department of Applied Psychology,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia*

ABSTRACT

The article considers the modern socio-psychological approach to the prevention of the socio-psychological destructive impact of misleading information on students. The article presents the consequences of the negative impact of the Internet on «Internet addiction» and the phenomena of «socio-psychological destructive effects of disinformation», which are directly related to each other.

Keywords: socio-psychological, digital technologies, misleading information, the Internet, student, approaches, negative consequences, addiction, destructive impact, socialization.

Информация о статье:

статья поступила в редакцию 26 октября 2023 г.,

подписана к печати в номер 12 (16) / 2023 – 15.12.2023 г.